ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՆԱՆԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

23 դեկտեմբերի 2020 թ. թիվ 09 նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ թիվ 24

ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով.

Համայնքի ավագանին որոշեց.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վանանդ համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 09 նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից.

Ավագանու անդամներ՝		կողմ	դեմ	ձեռնպահ
Էյլազ	Սրոյան			
Արթուր	Թովմասյան			
Քրիստինե	Խլղաթյան			

Վանանդի համայնքապետ Ս. Մանուկյան

2020 թ. դեկտեմբերի 23
Գ. Վանանդ

ՀԱՎԵԼՎԱԾ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Վանանդի համայնքի ավագանու
2020 թ. դեկտեմբերի 23-ի թիվ 24 որոշման

ՕՐԱԿԱՐԳ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վանանդ համայնքի ավագանու թիվ 09 նիստի.

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վանանդի համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 09 նիստի օրակարգի հաստատումը:

/ Զեկ. Ջ. Մանուկյան/

2. Վանանդ համայնքի ավագանու 2020 թվականի նոյեմբերի 25-ի թիվ 23 որոշման մեջ փոփոխություն կատարելու հարցը :

/ Զեկ. Ջ. Մանուկյան/

3. Համայնքի 2020 թվականի բյուջեում փոփոխություն կատարելու հարցը:

/ Զեկ. Ջ. Մանուկյան /

4. Համայնքի վարչական տարածքում տեղական տուրքերի և վճարների 2021 թվականի դրույքաչափերի սահմանման հարցը:

/ Զեկ. Ջ. Մանուկյան/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՆԱՆԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

23 դեկտեմբերի 2020 թ. թիվ 09 նիստի

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 25

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՆԱՆԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 25-Ի ԹԻՎ 23 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

Վանանդ համայնքի ավագանին որոշեց.

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վանանդի համայնքի ավագանու 2020 թվականի նոյեմբերի 25-ի << Հայաստանի հանրապետության Արմավիրի մարզի Վանանդի համայնքապետարանի աշխատակազմի 2021 թվականի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը որոշելու մասին>> թիվ 23 որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդ օրը:

Ավագանու անդամներ՝		կողմ	դեմ	ձեռնպահ
Այլազ	Սլոյան			
Արթուր	Թովմասյան			
Քրիստինե	Խլղաթյան			

Վանանդի համայնքապետ Ջ. Մանուկյան

2020 թ. դեկտեմբերի 23
գ. Վանանդ

ՀԱՎԵԼՎԱԾ
Հայաստանի Հանրապետու Արմավիրի մարզի
Վանանդի գյուղական համայնքի ավագանու
2020 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 25 որոշման

2021 թ. Վանանդի համայնքապետարանի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

1. Աշխատակիցների թվաքանակը --- 14
2. Հաստիքացուցակ և պաշտոնային դրույքաչափեր

հ/հ	Պաշտոնի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը	Լրավճար
1	Համայնքի ղեկավար	1	175000	-
2	Համայնքի ղեկավարի տեղակալ	1	143000	-
	ընդամենը	2	318000	-
	ԱՇԽԱՏԱԿԱԶՄ			-
1	Աշխատակազմի քարտուղար	1	138000	-
2	Աշխատակազմի գլխավոր մասնագետ	2	120000	-
3	Աշխատակազմի առաջատար մասնագետ	2	109000	-
4	Աշխատակազմի I կարգի մասնագետ	1	97000	-
	Ընդամենը	6	693000	-
	ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ			-
1	Ջրային տեխնիկ	1	88000	-
2	Ծառայողական ավտոմեքենայի վարորդ	1	88000	5000
3	Գյուղապետարանի վարչական շենքի պահակ	1	88000	-
4	Գյուղապետարանի վարչական շենքի հավաքարար	1	88000	-
5	Մանկապարտեզի պահակ	1	88000	5000
	Ընդամենը	5	440000	10000
	ԳՐԱԴԱՐԱՆ			
1.	Գրադարանի վարիչ	1	88000	-
	Ընդամենը	1	88000	-

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՆԱՆԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

23 դեկտեմբերի 2020 թ. թիվ 09 նիստի

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 26 -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՆԱՆԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի ԹԻՎ 37-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով , հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

Վանանդ համայնքի ավագանին որոշեց

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վանանդի համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 23-ի <<Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վանանդ համայնքի 2020 թվականի բյուջեն հաստատելու մասին >> թիվ 37-Ն որոշման մեջ կատարել փոփոխություն՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդ օրը:

Ավագանու անդամներ՝		կողմ	դեմ	ձեռնպահ
Այլազ	Սլոյան			
Արթուր	Թովմասյան			
Քրիստինե	Խլղաթյան			

Վանանդի համայնքապետ Ջ. Մանուկյան

2020 թ. դեկտեմբերի 23
Գ. Վանանդ

ՀԱՎԵԼՎԱԾ
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Վանանդի գյուղական համայնքի ավագանու
2020 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 26 Ն որոշման

Եկամուտներ

Ֆոնդային մաս

- Պետբյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով հատկացումներ / սուբվենցիա / - 936.0 հազար դրամ

Վարչական մաս

- Բյուջեի եկամուտների կորուստների փոխհատուցում - 7.6 հազար դրամ
- Այլ դոտացիաներ - 490.0 հազար դրամ
- Տեղական տուրքերն ավելացնել - 81.2 հազար դրամ
- Տեղական վճարները պակասացնել - 314.1 հազար դրամ

Ծախսեր

Ֆոնդային մաս

- 01 բաժնի 6 խմբի 1 դասի 5112 հոդվածին ավելացնել 936,0 հազար դրամ
- 01 բաժնի 6 խմբի 1 դասի 5113 հոդվածից պակասեցնել 234,0 հազար դրամ
- 01 բաժնի 6 խմբի 1 դասի 5112 հոդվածին ավելացնել 74,0 հազար դրամ
- 01 բաժնի 1 խմբի 1 դասի 5122 հոդվածին ավելացնել 160,0 հազար դրամ

Վարչական մաս

- 09 բաժնի 1 խմբի 1 դասի 4241 հոդվածից պակասեցնել 53,0 հազար դրամ
- 06 բաժնի 3 խմբի 1 դասի 4111 հոդվածից պակասեցնել 82,0 հազար դրամ
- 08 բաժնի 2 խմբի 1 դասի 4111 հոդվածից պակասեցնել 71,0 հազար դրամ
- 01 բաժնի 6 խմբի 1 դասի 4241 հոդվածից պակասեցնել 240,0 հազար դրամ
- 01 բաժնի 1 խմբի 1 դասի 4111 հոդվածից պակասեցնել 1543,0 հազար դրամ
- 01 բաժնի 1 խմբի 1 դասի 4232 հոդվածից պակասեցնել 6,0 հազար դրամ
- 01 բաժնի 1 խմբի 1 դասի 4212 հոդվածից պակասեցնել 173,4 հազար դրամ
- 01 բաժնի 1 խմբի 1 դասի 4214 հոդվածից պակասեցնել 2,2 հազար դրամ
- 01 բաժնի 1 խմբի 1 դասի 4234 հոդվածին ավելացնել 14,4, հազար դրամ
- 01 բաժնի 1 խմբի 1 դասի 4264 հոդվածին ավելացնել 166,9 հազար դրամ
- 09 բաժնի 1 խմբի 1 դասի 4111 հոդվածին ավելացնել 281,4 հազար դրամ
- 04 բաժնի 2 խմբի 4 դասի 4657 հոդվածին ավելացնել 1972,6 հազար դրամ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՆԱՆԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

23 դեկտեմբերի 2020 թ. թիվ 09 նիստի

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 27 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՆԱՆԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ, <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ, 11-րդ, 12-րդ և 13-րդ հոդվածներով, <<Աղբահանության և սանիտարական մաքրման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածով և <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասով

Ավագանին որոշում է՝

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վանանդ համայնքի վարչական տարածքում 2021 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Տեղական տուրքերի դրույքաչափերը հաշվարկելու համար կիրառել 0,5 գործակիցը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հունվարի 1-ից:

Ավագանու անդամներ՝		կողմ	դեմ	ձեռնպահ
Այլազ	Սլոյան			
Արթուր	Թովմասյան			
Քրիստինե	Խլղաթյան			

Վանանդի համայնքապետ Ջ. Մանուկյան

2020 թ. դեկտեմբերի 23
Գ. Վանանդ

ՀԱՎԵԼՎԱԾ
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Վանանդի գյուղական համայնքի ավագանու
2020 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 27-Ն որոշման

ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՆԱՆԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ

I. ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ

1. ***Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վանանդ համայնքում սահմանվում են տեղական տուրքի հետևյալ դրույքաչափերը՝***

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.

ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ յոթ հազար հինգ հարյուր դրամ,

բ. 1-ին կետի «ա» պարբերությունով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ տասնհինգ հազար դրամ,
- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ քսանհինգ հազար դրամ.
- 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ քսանհինգ հազար դրամ
- 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հիսուն հազար դրամ.

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հազար հինգ հարյուր դրամ.
- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երկու հազար հինգ հարյուր դրամ.

2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ մեկ հազար հինգ հարյուր դրամ.

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն դրույքաչափերի 1-ին կետի 1-ին ենթակետի ա/ պարբերությունով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն դրույքաչափերի 1-ին կետի 1-ին ենթակետի ա/ պարբերությունով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ երկու հազար հինգ հարյուր դրամ,

4) համայնքիվարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հարյուր հազար դրամ,

5) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային համայնքների վարչական տարածքում, բացառությամբ միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների կողեզրում՝ հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հիսուն հազար դրամ,

6) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝երեսուն հազար դրամ,

7) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային համայնքների վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ տասհազար դրամ,

8) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝քսանհինգ հազար դրամ,

9) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երկու հազար դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ վեց հազար դրամ դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում տասհազար

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասներկու հազար հինգ հարյուր դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսաներկու հազար դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ հիսուն հազար դրամ.

բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչև հազար դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ վեց հազար դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տաս հազար դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասներկու հազար հինգ հարյուր դրամ.

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսաներկու հազար դրամ.

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում հիսուն հազար դրամ.

10) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ հարյուր ութսուն դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար

11) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. առևտրի օբյեկտների համար՝ հինգ հազար դրամ դրամ,

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ քսանհինգ հազար դրամ.

գ. բաղնիքների (սաունաների) համար՝ երկու հարյուր հազար դրամ.

դ. խաղատների համար՝ հինգ հարյուր հազար դրամ.

ե. շահումով խաղերի համար՝ երկու հարյուր հիսուն հազար դրամ.

զ. վիճակախաղերի համար՝ յոթանասունհինգ հազար դրամ.

12) համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հազար դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երեք հազար դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համարյոթ հազար դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասնհինգ հազար դրամ.

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ քսանհինգ հազար դրամ.

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հինգ հարյուր դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հազար դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երկու հազար դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ չորս հազար դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ յոթ հազար դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասներկու հազար դրամ.

13) ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար. բացառությամբ միջպետական ու հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ հազար դրամ,

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ հազար ութ հարյուր դրամ.

գ. սոցիալական գովազդի համար՝ զրո դրամ.

դ. այլ արտաքին գովազդի համար՝ յոթ հարյուր հիսուն դրամ.

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով.

զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով.

14) Համայնքների խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հիսուն հազար դրամ.

15) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ հինգ հազար դրամ.

16) համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ երկու հարյուր հիսուն հազար դրամ.

17) համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ մեկ միլիոն երկու հարյուր հիսուն հազար դրամ.

բ. 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ երկու միլիոն հինգ հարյուր հազար դրամ,

գ. 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ երեք միլիոն հինգ հարյուր հազար դրամ.

18) համայնքի վարչական տարածքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար հիսուն հազար դրամ.

19) համայնքի տարածքում սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտի գործունեության թույլտվության համար՝

ա. կարաոկեի, դիսկոտեկի, բաղնիքի, սաունայի և շոգեբաղնիքի համար՝ օրացուցային տարվա համար՝ համայնքի վարչական տարածքում տաս հազար ՀՀ դրամ.

բ. հեստապարային ակումբի համար՝ օրացուցային տարվա համար՝ համայնքի վարչական տարածքում հարյուր հիսուն հազար ՀՀ դրամ:

II. ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐ

2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վանանդ համայնքում սահմանվում են տեղական վճարների հետևյալ դրույքաչափերը.

1) համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ երկու հազար դրամ.

2) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ հինգ հազար դրամ.

3) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ հինգ հազար դրամ.

4) համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ երեք հազար դրամ.

5) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ երկու հազար դրամ.

6) համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին (վերնիսաժներին) մասնակցելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ հինգ հազար դրամ.

7) համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար աղբահանության վճարը համայնքի ավագանին սահմանում է «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և դրույքաչափերի սահմաններում՝

ա. բնակելի նշանակության շենքերում կենցաղային աղբի համար ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ հարյուր դրամ,

բ. ոչ բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում, այդ թվում՝ հասարակական և արտադրական շենքերում և (կամ) շինություններում աղբահանությունն վճարը սահմանվում է ըստ շինության

- առևտրի (այդ թվում՝ շուկաների), հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ իրականացնող շինությունների մասով մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ հիսուն դրամ,

- հյուրանոցների և հյուրանոցային տնտեսության ծառայություններ, ինչպես նաև այլ գործունեություն իրականացնող հասարակական շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ քառասուն դրամ,

- արտադրական, արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ տասը դրամ,

- կրթական, մշակութային, առողջապահական, սպորտային գիտահետազոտական և նմանատիպ այլ հասարակական շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ հինգ դրամ,

գ. ոչ կենցաղային աղբի համար՝ ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ երեք հազար դրամ,

8) համայնքի կողմից իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման, ինչպես նաև աղբահանության վճար վճարողներին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի ինքնուրույն հավաքման և փոխադրման թույլտվության համար աղբահանության վճարը համայնքի ավագանին սահմանում է «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և դրույքաչափերի սահմաններում,

9) ջրմուղ-կոյուղու համար այն համայնքներում, որոնք ներառված չեն ջրմուղ-կոյուղու ծառայություններ մատուցող օպերատոր կազմակերպությունների սպասարկման տարածքներում, մասնավորապես ջրամատակարարման և ջրահեռացման վճարներ՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով՝ 1 մետր խորանարդի համար՝ մեկ հարյուր քսան դրամ,

10) համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով՝

ա.համայնքի բնակիչ համարվող անձանց համար՝վեց հազար դրամ

բ. այլ համայնքի բնակիչ համարվող անձանց համար՝ ուր հազար դրամ

գ.նպաստառու, միակողմանի ծնողազուրկ, հաշմանդամության կարգ ունեցող, մանկապարտեզ հաճախող երկուսից ավել երեխա ունեցող ընտանիքների համարերեք հազար

11) համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար՝ հազար դրամ փոխհատուցման վճար,

12) համայնքն սպասարկող անասնաբույժի ծառայությունների դիմաց տեղական վճարի դրույքաչափ՝ փոխհատուցման գումարի չափով՝

	Անասնաբուժական ծառայության անվանումը	Գին՝ դրամ
1	Կենդանիների հիվանդությունների բուժման, կանխարգելման հարցերով խորհրդատվություն	0
2	Ծննդօգնություն 1. թեթև միջամտություն 2. ծանր միջամտություն	 1000 2000
3	Վարակիչ հիվանդությունների նկատմամբ կենդանիների իմունականխարգելիչ պատվաստումներ և արյունառում կամ այլ նմուշառում՝ կախված կենդանու տեսակից (բացառությամբ՝ «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» պետական ծրագրում ընդգրկված հակաանասնահամաճարակային միջոցառումների)	Մանր կենդանի 0 Խոշոր կենդանի 0
4	Կենդանիների արտաքին և ներքին մակաբույծների դեմ պայքար	500
5	Ախտահանություն	1 քառ. մետր 100
6	Միջատազերծում (դեզինսեկցիա)	1 քառ. մետր 100
7	Կենդանու բուժում՝ կախված հիվանդության տեսակից և կենդանու տեսակից	Յուրաքանչյուր այցելություն 1000
8	Արհեստական սերմնավորում	10000
9	Կենդանիների նախասպանդային զննում՝կախված կենդանու տեսակից	Մանր կենդանի 1000 Խոշորկենդանի 2000